Պատմություն և մշակույթ 2024 № 21 (2)
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2024.21.2.313

The war and the challenges of preserving cultural heritage in the border settlements of Aygehovit and Voskepar, Tavush region, RA

Ani Kostandyan
https://orcid.org/0009-0004-9644-5916
YSU Ijevan branch
ani.kostandyan@ysu.am

Key words: cultural heritage, challenges of cultural heritage protection, war, border heritage, enclaves, Tavush.

The article discusses the issue of cultural heritage, protection in border settlements of Tavush region of RA, as well as the new challenges emerging as a result of the concession of enclave lands, using the example of Aygehovit and Voskepar settlements.
We referred to the conventions adopted by international organizations preventing damage to cultural heritage and to the international experience of how cultural values were damaged during wars.
As a result of the investigation, we came to the conclusion that in order to prevent new cultural genocides, stronger levers are needed to put pressure on the aggressor states.

Պատերազմը և մշակութային ժառանգության պահպանության մարտահրավերները ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ Այգեհովիտ և Ոսկեպար բնակավայրերում

Անի Կոստանդյան
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ

Հիմնաբառեր՝ մշակութային ժառանգություն, ՄԺ պահպանության մարտահրավերներ, պատերազմ, սահմանային ժառանգություն, անկլավներ, Տավուշ:

Հոդվածը քննարկում է մշակութային ժառանգության (այսուհետ՝ նաև ՄԺ) պահպանության խնդիրը ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ բնակավայրերում, ինչպես նաև անկլավային հողերի զիջման արդյունքում ի հայտ եկող նոր մարտահրավերները Այգեհովիտ և Ոսկեպար բնակավայրերի օրինակով:

History and Culture Vol.-21(2), 2024, pp. 313-327.

Received: 21.09.2024
Revised: 06.10.2024
Accepted: 20.11.2024

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2024

Անդրադարձել ենք միջազգային կազմակերպությունների ընդունած ՄԺ վնասումը կանխող կոնվենցիաներին և միջազգային փորձին:

Քննության արդյունքում եկել ենք այն եզրահանգմանը, որ մշակութային նոր ցեղասպանությունները կանխելու համար առավել կոշտ լծակներ են պետք՝ ճնշում կիրառելու ագրեսոր պետությունների նկատմամբ:

Война и проблемы сохранения культурного наследия в приграничных населенных пунктах Айгеовит и Воскепар Тавушской области, РА

Ани Костандян
Иджеванского филиала ЕГУ

Ключевые слова: культурное наследие, проблемы сохранения культурного наследия, война, пограничное наследие, анклавы, Тавуш.

В статье рассматривается вопрос охраны культурного наследия в приграничных населенных пунктах Тавушской области РА, а также новые проблемы, возникающие в результате концессии анклавных земель, на примере поселков Айгеовит и Воскепар.

Мы обратились к конвенциям, принятым международными организациями, предотвращающим ущерб человеческим ресурсам, а также к международному опыту нанесения ущерба культурным ценностям во время войн.

Размышляя над этими вопросами, мы пришли к выводу, что для оказания давления на государства-агрессоры нужны более сильные рычаги для предотвращения нового культурного геноцида.

* * *

Ներածություն: Մշակութային ժառանգության պահպանությունը գլոբալ խնդիր է, և այս մարտահրավերի առաջ կանգնած է ողջ մարդկությունը: ՄԺ պահպանությանը սպառնացող ամենամեծ խնդիրներից մեկն էլ պատերազմն է իր աղետալի հետևանքներով ու անօրինական գործողություններով՝ պատերազմական հանցագործություններով, որոնք զինված հակամարտության ընթացքում կատարվում են ռազմական կամ քաղաքացիական անձանց կողմից՝ խախտելով պատերազմի օրենքները [Kocak, Hazarhun, 2023, 309]: Այս հանցագործությունների թվում է մշակութային ցեղասպանությունը, ուստի կարող ենք պնդել, որ պատերազմը ոչ միայն մարդու թշնամին է, այլև մարդու ստեղծած լավագույն երևույթի՝ մշակութային ու պատմական ժառանգության [Teijgeler, 2006, 135]:

Հայտնի է, որ մշակութային ժառանգության վայրերը բազմաթիվ պատերազմներում գիտակցաբար վնասվել կամ ավերվել են հնագույն ժամանակներից մինչև մեր օրեր: Պատմամշակութային ժառանգությունը ինքնության մաս է, ուստի բախումների ժամանակ ատելության թիրախ է ծառայում, և ժառանգության ոչնչացումը դիտվում է որպես հակառակորդի

նկատմամբ հոգեբանական ճնշում: Վերոգրյալի ապացույցն են այն մշակութային վայրերի վրա հարձակումները, որոնք տեղի են ունեցել Հարավսլավիայում, Աֆղանստանում, Սիրիայում, Իրաքում, Արցախում և այլուր:

Պատերազմի և հակամարտության ժամանակ ՄԺ պահպանությունը առավել կայուն դարձնելու համար միջազգային կազմակերպությունները մեծ ջանքեր են գործադրում. ընդունվել են տարբեր հռչակագրեր ու կոնվենցիաներ, ինչպես օրինակ՝ Հաագայի 1954 թվականի զինված բախումների ժամանակ ՄԺ պահպանության կոնվենցիան, ավելի ուշ՝ 2003 թվականի հոկտեմբերի 17-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր կոնֆերանսում ընդունված հռչակագիրը, ըստ որի՝ «Միջազգային հանրությունը ճանաչում է մշակութային ժառանգության պաշտպանության կարևորությունը և վերահաստատում է իր հանձնառությունը՝ պայքարելու դրա ցանկացած ձևով դիտավորյալ ոչնչացման դեմ, որպեսզի մշակութային ժառանգությունը փոխանցվի հաջորդ սերունդներին» [ՅՈՒՆԵՍԿՕ, 17.10.2003]: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2017 թվականի մարտի 24-ի 2347 բանաձևն էլ ընդգրկում է բացառապես մշակույթը և վերաբերում է մշակութային ժառանգությանը սպառնացող վտանգներին:

Այնուամենայնիվ, այսօր էլ ամբողջ աշխարհի աչքի առաջ պատերազմների ժամանակ ավերվում են ՄԺ արժեքները, ինչպես օրինակ Բամիանի Բուդդաները, Սիրիայում և Իրաքում ԴԱԻՇ-ի կողմից Համաշխարհային ժառանգության մի շարք օբյեկտների ավերածությունները [Rössler, 2020, 100], վերջին ցցուն օրինակն էլ Արցախում Շուշիի Ղազանչեցոց վանքի հրետակոծումը [Տիգրանյան, 2022, 227-228], Կանաչ ժամի հիմնահատակ ոչնչացումը, բազմաթիվ հուշարձանների և խաչքարերի տապալումն է: Հստակ երևում է, որ մշակութային ժառանգության օբյեկտների պաշտպանության համար գործող համընդհանուր պայմանագրերը, համաձայնագրերը և կանոնակարգերը չեն գործել այս ժառանգության օբյեկտների վրա հարձակման ժամանակ: Կարելի է պնդել, որ միջազգային մարդասիրական իրավունքով կարգավորվող մշակութային արժեքների պաշտպանության ռեժիմի ամենաթույլ կողմը պատժամիջոցների ռեժիմի բացակայությունն է, որից էլ՝ կոնվենցիաները խախտելու դեպքում, օգտվում են պատասխանատու կողմերը: Բացառությամբ 1999 թվականի Արձանագրության՝ մնացած բոլոր տեքստերը կողմերին են թողել այն պատժամիջոցների կարգավորումը, որոնց ենթարկվելու են շահագրգիռ պետությունները կոնվենցիաները խախտելու դեպքում: Պետություններին, որոնք նույնիսկ չեն կարող արդյունավետ լինել մշակութային արժեքների պաշտպանության հարցում, հանձնարարված է պատժել պատասխանատու կողմերին հակամարտություններից հետո [Kocak, Hazarhun, 308]:

ՀՀ հյուսիսարևելյան հատվածում գտնվող Տավուշի մարզը հարուստ է պատմամշակութային ժառանգությամբ, սակայն գտնվելով Ադրբեջանի Հանրապետության հետ սահմանին, մեծ վտանգ կա ՄԺ պահպանության առումով, հատկապես այն հատվածներում, որոնք շատ մոտ են սահմանին: Պատերազմը, սահմանային խնդիրները և մշակութային ժառանգությունը Տավուշի մարզի կենսընթացի բաղկացուցիչ տարրերն են: Տավուշի մարզի սահմանամերձ բնակավայրերից են Իջևան խոշորացված համայնքի Այգեհովիտ և Նոյեմբերյան խոշորացված համայնքի Ոսկեպար բնակավայրերը, որոնք ներկայացվում են սույն աշխատանքում: Ընդ որում, փաստարկները, որոնք ներկայացվում են, այս կամ այն լրացմամբ կարող են ընդունելի լինել նաև այլ սահմանամերձ համայնքների մշակութային արժեքների պահպանության հարցում:

Հոդվածի դրույթները հիմնված են ժառանգության պահպանության միջազգային համակարգի տեսական նյութի, Տավուշի մարզի Այգեհովիտ և Ոսկեպար բնակավայրերի ՄԺ ուսումնասիրության, բնակիչների հետ խորացված հարցազրույցների (Այգեհովիտ բնակավայրից հարցմանը մասնակցել են 27 բնակիչ, որոնցից՝ 12 տղամարդ, 15 կին։ Նրանցից 18-ն ունեն բարձրագույն կրթություն։ Ոսկեպար բնակավայրից հարցմանը մասնակցել են 14 բնակիչ, որոնցից՝ 9 կին, 5 տղամարդ։ Նրանցից 8-ն ունեն բարձրագույն կրթություն։ Հարցմանն ընդգրկվել են երիտասարդ, միջին և ավագ տարիքի բնակիչներ), տուրիստական գործակալությունների (հարցմանը մասնակցել են քայլարաշավային տուրեր կազմակերպող 5 գործակալություններ և 2 անհատ գիդեր) տուրերի ուսումնասիրման վրա՝ պարզելու այն խնդիրները, որոնց բախվում են Տավուշի սահմանամերձ բնակավայրերի բնակիչները մշակութային իրավունքների սահմանափակման և ՄԺ պահպանության մարտահրավերների պատճառով։ Հոդվածի գիտական նորույթը ՄԺ ներկա գործառույթի և համայնքային կյանքում դերակատարման, ինչպես նաև այն մարտահրավերների ներկայացումն է, որի առաջ կանգնած են անկլավային վերոնշյալ բնակավայրերի համայնքները ՄԺ պահպանության հարցում։

Այգեհովիտ բնակավայր։ Այգեհովիտ բնակավայրը հարուստ է մշակութային նյութական ժառանգությամբ։ ՀՀ կառավարության որոշմամբ՝ թվով 15 հուշարձաններ Այգեհովիտ բնակավայրից ներառվել են Տավուշի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում (ՀՀ կառավարության որոշումը ՀՀ Տավուշի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին) այդ թվում՝ եկեղեցիներ, մատուռներ, գյուղատեղիներ, գերեզմանոցներ, խաչքարեր, կամուրջ, աշտարակ, ինչպես նաև Սրվեղի վանական համալիրը, որը գտնվում է բնակավայրից 3 կմ դեպի հարավ-արևմուտք՝ անտառի մեջ՝ Խաչի տակ կոչվող վայրում (Նկ. 1)։ Բնակավայրում ամենամեծ ժողովրդական սերն ու ուշադրություն վայելում է XII-XIII դարերով թվագրվող Սրվեղի վանական համալիրը, որը եղել է միջնադարյան Հայաստանի Կայան գավառի հոգևոր ու մշակութային կենտրոններից մեկը։ Կիրանց վանքից հետո այն երկրորդ աղյուսաշեն հուշարձանախումբն է [Էլլարյան, 1968, 71]։ Հուշարձանախումբը բաղկացած է երկու եկեղեցիներից, միաբանների բնակելի և տնտեսական շինություններից՝ շրջափակված պարսպապատով, շրջակայքում կան այլ շինությունների մնացորդներ, տապանաքարեր, խաչքարեր (Տավուշի Այգեհովիտի զարդը. Սուրբ Սրվեղի վանական համալիր)։ Վանքը հնուց հայտնի է իր բուժիչ և հրաշագործ հատկություններով։ Հեռավոր քաղաքներից բժշկելու հույսով այստեղ են բերել զանազան հիվանդություններով տառապողների։ Ինչպես պնդում է Այգեհովիտի բնակչուհի Լիլիթ Նասիբյանը՝ «Այսօր էլ այն սոսկ վանք չէ, այլ ուխտատեղի, որտեղ այցելում են ոչ միայն համայնքի անդամները, այլև շատ ուխտավորներ ու զբոսաշրջիկներ» [ԴԱՆ, 2024, 5]։

Էլլարյանը ներկայացնում է նաև Այգեհովիտի մերձակայքում պահպանված մատուռները։ Մասնավորապես նշում է, որ Մահմուդ Եղցին փոքրիկ մատուռ է՝ կառուցված որձաքարի մանր բեկորներով, իսկ կառուցման ժամանակն անհայտ է։ Կոտրած Եղցին կիսավեր փոքր մատուռ է՝ շուրջը տապանաքարերով գերեզմանոց։ Վարդի Խմհատի խաչ կոչվող մատուռը թաղակապ ծածկ ունի, իսկ վերջինիս բեմում՝ քանդակազարդ մեծ խաչ է դրված [Էլլարյան, 1980, 70-71]։ Ի տարբերություն Սրվեղի վանքի՝ բնակիչները շատ սուղ տեղեկություններ ունեն այս կիսավեր ու

խոտածածկ մատուռների մասին։ Բնակչուհի Նարա Մելքումյանի խոսքերով՝ «Քանի որ Սբ. Սրվեղն ու Սբ. Հռիփսիմեն ավելի բարեկարգ են եղել, թերևս այս պատճառով միայն այս երկու կառույցներն են ծառայել ժողովրդին, մարդիկ այցելել են, հոգևոր դաշտի հետ առնչվել, իսկ օրինակ Կոտրած եղցին շատ անբարեհույս վիճակում է, մատուռի գոյության մասին միայն պատն է վկայում, ուստի ժողովուրդը չէր կարող այնտեղ որևէ ծես կատարել, սա էլ լրացուցիչ պատճառ է դարձել, որ անուշադրության մատնվի» [ԴԱՆ, 2024, 1]։ Բնակավայրի «Ժամի թաղ» կոչվող հատվածում գտնվող եկեղեցին[1] բնակիչների պնդմամբ՝ խորհրդային տարիներին ծառայել է որպես պահեստ, նույնիսկ գոմ։ Վերջերս վերանորոգվել է գյուղի բարեգործ Ամիր Ղևոնդյանի ֆինանսավորմամբ, ապա 2023 թվականին Հռիփսիմյաց կույսերի հիշատակի օրը սրբագործվել և ստացել է Սբ. Հռիփսիմե անունը։ Այսօր այն գործող եկեղեցի է, որտեղ պատարագ է մատուցվում և կատարվում եկեղեցական արարողություններ [ԴԱՆ, 2024, 9]։

Ինչպես շեշտում է Ա. Տիգրանյանը՝ ՄԺ գլխավոր գործառույթներից մեկը սոցիալական համախմբումն է, որը նպաստում է ինքնության հաստատման և համայնքի զարգացման գործընթացին [Տիգրանյան, 2023]։ Հիշենք նաև, որ Ֆարոյի կոնվենցիան ՄԺ իրավունքը ներկայացնում է որպես ժառանգության մեջ ներգրավվելու և ՄԺ-ից օգտվելու հնարավորություն (**Մշակութային ժառանգության նշանակությունը հասարակության համար**)։ Իր խոսքում բնակիչ Վահե Առուստամյանը շեշտում է. «Գյուղի մշակութային ժառանգությունն է համայնքին ճանաչում բերողը և այս տարածքի հայկականությունը վկայողը» [ԴԱՆ, 2024, 7]։

Հարկ է նշել, որ վերջին շրջանում այս բնակավայրի բնակչության մոտ ձևավորվում է ՄԺ պահպանությանը ներգրավվելու պատրաստակամություն և ժառանգության նկատմամբ պատասխանատվություն։ Քիչ չեն դեպքերը, երբ համայնքի անդամները միջամտել են ժառանգության շուրջ կատարվող փոփոխություններին, փնտրել բարերարների՝ ֆինանսավորելու ժառանգության վերականգնումն ու վերանորոգումը, ինչպես տեղի է ունեցել վերոնշյալ Սբ. Հռիփսիմե եկեղեցու դեպքում։ Համայնքի բնակչուհի Նարա Մելքումյանի խոսքերով՝ շրջանառվում է մի տեղեկություն, համաձայն որի՝ ժամանակին (հստակ չէ՝ երբ) ցանկացել են Սրվեղի վանքի գմբեթին խաչ տեղադրել, սակայն բնակիչները թույլ չեն տվել՝ պատճառաբանելով, որ առանց այդ էլ գմբեթը գրեթե անբարեհույս վիճակում է, և գուցե խաչի ծանրությունը պատճառ դառնա, որ գմբեթը փլուզվի։ Համայնքի բնակիչները, մտահոգված լինելով վանքի պահպանության հարցով, այցելող զբոսաշրջիկներին հաճախ են տեղեկացնում իրենց մտահոգությունների մասին և փորձում որևէ կառույցի կամ բարերարի միջոցով վերանորոգել վանքը։ Մյուս կողմից՝ վանքը գտնվում է սահմանամերձ բնակավայրում, և ըստ էության, գուցե նաև այս հանգամանքով պայմանավորված, ոչ ոք մինչև այսօր չի ցանկացել մեծ ներդրումներ կատարել վտանգավոր գոտում գտնվող եկեղեցին վերանորոգելու համար։ Վահե Առուստամյանի վկայությամբ՝ 2015 թվականին Վորլդ Վիժն ծրագրի շրջանակներում Այգեհովիտի երիտասարդական խումբը դրամաշնորհ է շահել և արդյունքում մաքրել են տարածքը, տեղեկատվական պաստառներ տեղադրել, դուռ և մոմակալ դրել։ Եկեղեցու մոտակայքում նաև նստարաններ ու տաղավարներ են տեղադրված։ Բնակիչների խոսքերով՝ իրենց գյուղում ավանդույթ է ընտանեկան ուրախ խնջույքները, մատաղը, Վարդավառը տոնել Սրվեղի

[1] Ըստ ժողովրդական զրույցների՝ եկեղեցու արևահայաց պատին եղել է արևային ժամացույց, որի շնորհիվ էլ նախկինում մարդիկ կարողանում էին իմանալ, թե օրվա որ ժամն է, և վարկածներից մեկի համաձայն՝ այս պատճառով էլ և՛ եկեղեցին, և՛ ամբողջ թաղամասը ստացել է «Ժամ» անվանումը։

բակում: Համայնքապետարանը հոգ է տանում դեպի եկեղեցին տանող դժվարանցանելի ճանապարհը որոշ չափով վերանորոգելու մասին, իսկ բնակիչները օգնում են և հաճախ բնակավայրի անդամներով մաքրում, դյուրացնում են դժվարանցանելի ճանապարհը [ԴԱՆ, 2024, 11]: Այս վերաբերմունքին նպաստել են նաև տուրիստական հոսքը, ուխտագնացությունները դեպի համայնքի ՄԺ հուշարձաններ:

Ուշագրավ է, որ 1990-ականներից զբոսաշրջիկների ընտրությունը փոփոխվում է, և այսօր զբոսաշրջությունը թեքվում է դեպի գյուղեր և բնություն: Զբոսաշրջիկներին հետաքրքրում է նոր փորձառությունների հնարավորությունը, տեղական կյանքին ներգրավվելը և մասնակցելը [Salvatore, Chiodo, Fantini, 2018, 41-51], ուստի, վերջին շրջանում շատ տուրիստական գործակալությունների տուրերը ուղղվում են դեպի բնություն և մշակույթի քիչ բացահայտված վայրեր, որոնցից մեկն էլ Այգեհովիտն է: Ի դեպ՝ գյուղական, մարգինալ և լքված թվացող տարածքները կարող են կարծրատիպեր կոտրել և համայնքահենք տուրիզմ վարելով, մեծ տուրիստական ներհոսք ապահովել՝ օգտագործելով նաև նորարարական մեթոդներն ու գյուղի առանձնահատկությունները, ինչպես օրինակ Տավուշում գտնվող Լաստիվեր անապատը[1] [Կոստանդյան, 2023, էջ 122-123]: Ինչպես նշում է Ռասոլիմանեշը, համայնքի համար տուրիզմի շահավետությունը ընկալելուց հետո սովորաբար համայնքի բնակիչները սկսում են արժևորել ՄԺ արժեքները, ոչ միայն ստացած տնտեսական օգուտների համար, այլև սոցիալական, քանզի սեփական մշակութային արժեքների յուրահատուկ ու գրավիչ լինելու փաստը շոյում է տեղացիների ինքնությունը [Rasoolimanesh, 2019, 3]:

Հարկ է նշել, որ սահմանային դիրքի պատճառով բնակավայրի հողատարածքների մեծ մասը գտնվում է վտանգավոր գոտում, և այգեգործությամբ զբաղվելը արկածախնդրության պես մի բան է: Դեպքեր են եղել, երբ զոհվել են խաղաղ բնակիչներ, ովքեր պարզապես աշխատելիս են եղել իրենց խաղողի դաշտերում (Այգեհովիտի 150 տոննա խաղողը տունկերի վրա նեխում է): Տուրիստական հոսքը ակտիվություն ու ոգևորություն է բերել բնակավայր և բնակիչներից շատերը փորձում են ներգրավվել տուրիստական բիզնեսի մեջ և կյանքն առավել բարեկեցիկ դարձնել2, սակայն սահմանում մի փոքր լարվածության պատճառով չեղարկվում են տուրերը և նույնիսկ համայնքի բնակիչներն այդ ընթացքում չեն օգտվում իրենց մշակութային իրավունքից, որովհետև դա դառնում է կյանքի համար վտանգավոր: Համայնքի բնակչուհի Սիլվա Դալլաքյանի խոսքերով՝ Սրվեղի վանքը գտնվում է դիտակետում, տեսանելի է թշնամու կողմից և լարվածության ժամանակ բնակիչները խուսափում են վանք այցելել [ԴԱՆ, 2024, 3]: Ասվածը վկայում է, որ մարդկանց ՄԺ իրացման իրավունքը խաթարվում է այն հանգամանքով, որ ժառանգությունը սահմանամերձ և վտանգավոր գոտում է գտնվում: Հիշենք, որ ըստ Ֆարոյի կոնվենցիայի առաջին հոդվածի՝ մշակութային ժառանգությանն առնչվող իրավունքները կազմում են մարդու իրավունքների համընդհանուր

[1] Լաստիվերում էլեկտրաէներգիա չկա, ճանապարհը գտնվում է վատ վիճակում, իսկ Ենոքավանից դեպի Լաստիվեր ոտքի 3 կմ ճանապարհը շատ դժվար է և հնարավոր միայն երիտասարդների և լավ առողջական վիճակում գտնվող զբոսաշրջիկների համար: 2004 թվականին հիմնելուց 7 տարի անց միայն կարողացել են հաջողություններ գրանցել և զբոսաշրջիկներ ունենալ, բայց այսօր օրական 100-ից ավելի զբոսաշրջիկներ են այցելում, և նրանց հոսքը չի դադարում ամբողջ տարին:

[2] Բնակիչներից ոմանք ձիերով, հատուկ մեքենաներով արտաճանապարհային տուրերով զբոսաշրջիկներին ուղեկցում են դեպի ՄԺ վայրեր և գումար վաստակում:

հռչակագրով սահմանված մշակութային կյանքին մասնակցելու իրավունքի անքակտելի մաս (Մշակութային ժառանգության նշանակությունը հասարակության համար)։

Հարկ է շեշտել, որ մեր հարցումների ընթացքում հաճախ բնակիչները մտահոգություն էին հայտնում անկլավային կոչվող տարածքների զիջման վերաբերյալ խոսակցությունների հետ կապված (Բարխուդարլու կոչվող տարածքը տեղակայված է Ազատամուտ, Դիտավան, Այգեհովիտ բնակավայրերի, իսկ հյուսիսում՝ Աղստև գետի միջև (Նկ. 2))։ Պատկերը մտահոգիչ է դառնում հատկապես այն պատճառով, որ Այգեհովիտ տանող ճանապարհը անցնում է անկլավային տարածքով։ Այս հանգամանքը շատ է անհանգստացնում բնակիչներին, ովքեր նշում են, որ անկլավը զիջելու պարագայում առանց այն էլ սակավ բնակչությամբ բնակավայրի բնակչությունն ավելի կնվազի, իսկ տուրիստական հոսք գուցե չլինի։

Արձանագրենք նաև, որ դեռ 1920 թվականի ապրիլին՝ Ադրբեջանի խորհրդայնացումից հետո, Կարմիր բանակը գրավեց Արցախն ու Զանգեզուրը, ինչպես նաև հարձակումներ եղան Տավուշի ուղղությամբ։ Գանձակի շրջանի խորհրդային զորքերի հրամանատար Վելիկանովը հրահանգում է դուրս հանել հայկական զորքերը այսօրվա Այգեհովիտ, Վազաշեն և Պառավաքար գյուղերից, որի արդյունքում այս գյուղերի պատկանելիության շուրջ վեճեր էին առաջացել (Այգեհովիտ, Վազաշեն, Պառավաքար գյուղերի շուրջ հայ-ադրբեջանա/ռուսական վեճ. հուլիս, 1920 թ.)։ Ինչից կարելի է եզրակացնել, որ անկլավ կոչվող տարածքների հանձնման դեպքում միայն անցակետով չի սահմանափակվելու. և՛ բնակավայրը, և՛ ՄԺ-ն հայտնվելու են վտանգավոր իրավիճակում։ Կարելի է ենթադրել, որ այս մտահոգիչ սցենարի դեպքում բնակչության մեծ մասը կլքի բնակավայրը, իսկ ՄԺ-ն կմնա շրջափակված ադրբեջանական համարվող տարածքներով։ Հարկ է նշել, որ մշտապես առկա է նաև նոր պատերազմի վտանգը, ինչի մասին խոսում են պետական ամենաբարձր պաշտոնյաները [ՀՀ վարչապետի ասուլիս, 07.05.24]։

Ոսկեպար բնակավայր։ Ոսկեպարը Հայաստանի հնագույն բնակավայրերից է, հիմնադրվել է առնվազն VI-VII դարերում։ Գյուղի և հարակից տարածքներում պահպանված հուշարձանների ու ավերակների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարբեր ժամանակաշրջաններում առնվազն երեք անգամ ենթարկվել է փոքր տարածության վրա տեղափոխության՝ զբաղեցնելով մերթ ներկայիս Վերին Ոսկեպար, մերթ Ներքին Ոսկեպար անունը կրող նախկին բնակավայրերի և հարակից գյուղատեղիների տարածքները [Կարապետյան, Աբրահամյան, Հակոբյան, Քորթոշյան, Մովսիսյան, Հովհաննիսյան, Գևորգյան, 2013, 3]։ Ոսկեպարը հարուստ է տարբեր դարերով թվագրվող պատմամշակութային հուշարձաններով. թվով 14 հուշարձան Հայաստանի կառավարության կողմից 2004 թվականին հաշվառվել և ներառվել են Ոսկեպարի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկում (ՀՀ Կառավարության որոշումը ՀՀ Տավուշի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին)։

Ոսկեպարի տարածքում եղել է Սբ. Աստվածածին անունով երկու եկեղեցի։ Եկեղեցիներից մեկը՝ առավել հայտնին, կառուցվել է VI- VII դարերում և առ այսօր կանգուն է (Նկ. 3), մյուսը կառուցվել է 1875 թվականին, ներկայումս գոյություն չունի։ 1890-ական թվականներին գյուղատեղի այցելած Մակար Բարխուտարեանցն իր աշխատության մեջ նշում է, որ եկեղեցին տեսել է կիսավեր վիճակում [Բարխուտարեանց, 1895, 381]։

Էլլարյանը շեշտում է, որ Ոսկեպարի ներկայումս կանգուն Սբ. Աստվածածին եկեղեցին Հայաստանի վաղ միջնադարի ուշագրավ հուշարձաններից է՝ խաչաձև հորինվածքով՝ կառուցված

Ջողազի բաց սրճագույն և սպիտակ ավազաքարով: Պեղածո խեցեղենի բեկորները վկայում են, որ եկեղեցին գործել է երկար ժամանակ [*Էլլարյան, 1980, 76-77*]:

ՀՃՈՒ հիմնադրամի «Ոսկեպարի պատմական հուշարձանները» աշխատության մեջ ներկայացվում են՝ Գոմաձորի եկեղեցին, Խլիսլան Աղբրի եկեղեցին, Կորաբերդը,Կամրջակը, Բերդ-Աշտարակը, Ոսկեպարի հին կամուրջը, Հին կամ Վերին Ոսկեպարի գերեզմանոցները, Կալապանի եկեղեցին, Սարվորների հուշարձանը, Բերդավանքը, Ջուխտակ վանքը, որը գտնվում է գյուղից 8 կմ հարավ-արևմուտք: Այս վանական համալիրը բաղկացած է պաշտամունքային չորս կառույցներից, որոնցից երեքը եկեղեցի են, մեկը՝ մատուռ: Չափերով ամենամեծ եկեղեցին այսօր կիսավեր է: Ոսկեպարի հին կամուրջը (Նկ. 4) գտնվում է գյուղից շուրջ 3,5 կմ արևմուտք՝ համանուն գետի վրա: Հորինվածքային, կառուցողական և շարվածքային առանձնահատկությունները բնորոշ են XIII դարին: Բերդ-աշտարակը գտնվում է գյուղից 2,5 կմ արևմուտք՝ Ոսկեպար գետի ձախ ձորապռնկին: Այն իրենից ներկայացնում է քառակուսի հատակագծով, 10 մ բարձրության քառահարկ բնակելի շինություն՝ հավանաբար կառուցված XIII դարում: Ոսկեպարից 6 կմ արևմուտք գտնվող Բերդավանքի եկեղեցուց այսօր պահպանվել է հյուսիսային կրկնահարկ ավանդատունը, նրան հարող խորանի հյուսիսային կորության մի մասը և արևմտյան որմի հյուսիսային անկյանը հարող հատվածը: Այս կենտրոնագմբեթ, աղյուսաշեն եկեղեցին թե՛ հորինվածքային, թե՛ կառուցողական առանձնահատկություններով նման է Կիրանցի վանքի եկեղեցուն: Կառույցը ներքուստ սվաղված է եղել և պատված որմնանկարներով, որոնք ներկայումս սվաղի պահպանված շերտերի վրա ներկայանում են առանձին դրվագների տեսքով [Կարապետյան, Աբրահամյան, Հակոբյան, Քորթոշյան, Մովսիսյան, Հովհաննիսյան, Գևորգյան, 2013]:

Հարկ է անդրադառնալ Բարխուտարեանցի այն հիշատակությանը, որ XIX դարից Ոսկեպարում սկսել են բնակություն հաստատել թուրքեր [Բարխուտարեանց, 1895, 381]: Խորհրդային Միության վերջին տարիներին՝ 1980-ական թվականներին Ոսկեպարի և հարակից բնակավայրերում սկսվեցին հայ-ադրբեջանական հողային հակամարտությունները: Խորհրդային Ադրբեջանի Ղազախի շրջանի կազմում ընդգրկված Ներքին Ոսկեպար գյուղի ադրբեջանցիներն աստիճանաբար հողային զավթումներ էին իրականացնում դեպի Խորհրդային Հայաստանի Նոյեմբերյանի շրջանի Ոսկեպար գյուղ, և այս հակամարտությունը շարունակվում է ցայսօր (Ոսկեպարի օրինակով. հայ-ադրբեջանական հողային կռիվը 1980-ականներին):

Գտնվելով հայ-ադրբեջանական շփման գծի անմիջական հարևանությամբ՝ Ոսկեպար բնակավայրը հաճախակի ենթարկվում է Ադրբեջանի զինված ուժերի ստորաբաժանումների կողմից տարբեր տրամաչափի զինատեսակներից արձակված գնդակոծության, որոնց հետևանքով վիրավորվում են խաղաղ բնակիչներ, վնասվում բնակավայրի շինությունները: Ադրբեջանական մարտական դիտակետերից արձակվող գնդակոծություններից Ոսկեպար-Բաղանիս ավտոճանապարհով երթևեկողների անվտանգությունը պաշտպանելու նպատակով կառուցվել է հիմնական մայրուղին շրջանցող ճանապարհ:

Ուշագրավ փաստ է, որ եթե Այգեհովիտի մշակութային ժառանգությունը դարձել է տուրիստական ուղղություն, ապա Ոսկեպարի ՄԺ-ն մինչև վերջերս այնքան էլ չէր գրավում տուրիստական գործակալություններին, հավանաբար չափազանց վտանգավոր գոտում գտնվելու

պատճառով: Սակայն անկլավային կոչված տարածքների զիջման գործընթացին զուգահեռ, սկսեցին տուրեր կազմակերպվել՝ բացահայտելու Ոսկեպարի հուշարձանները: Ավելին, հասարակության խոսակցության թեման դարձավ Ոսկեպարի ՄԺ-ի Հայաստանի հատվածում մնալ-չմնալու հարցը և հայկական սոցցանցերում ամենաքննարկված թեմաներից մեկը դարձավ հատկապես Սբ. Աստվածածին եկեղեցին, որը գտնվում է հայ-ադրբեջանական շփման գծի տավուշյան հատվածի անմիջական հարևանությամբ՝ հայկական կողմում: Շատերը պնդում էին, որ եկեղեցին տարածքի հայկականությունը վկայող խոսուն փաստ է, ոմանք անհանգստանում էին, թե արդյոք սահմանազատումից հետո կարող են օգտվել ՄԺ իրացման իրավունքից, ոմանք պնդում էին, թե այդ եկեղեցին մոռացված և չօգտագործվող ժառանգություն է, որ այնտեղ վաղուց պատարագներ չեն կատարվում: Դրան ի պատասխան՝ Տավուշի Թեմի Երիտասարդաց պատասխանատու Թովմաս ուրարակիր Առաքելյանը տեսանյութ հրապարակեց, որտեղ երևում է տարբեր տարիներին հոգևոր դասի մատուցած պատարագներից դրվագներ, ավելին, Տավուշի Թեմը հայտարարություն տարածեց և բոլորին հրավիրեց Սուրբ Զատիկը տոնել Ոսկեպարում (Հրավեր. Զատկական աղոթք և հավկթախաղ):

Ի վերջո, բուռն քննարկումներից, բանավեճերից հետո կառավարությունը հաստատեց, որ Ոսկեպարի Սբ. Աստվածածին եկեղեցին մնում է հայկական հատվածում, այնուամենայնիվ, այն գտնվում է սահմանից ընդամենը մի քանի մետր հեռավորության վրա և դառնում է այցելության համար չափազանց վտանգավոր ժառանգություն:

Ավելի ուշ ԿԳՄՄՆ-ն հայտարարեց, որ շուտով կնորոգվեն Սբ. Աստվածածին եկեղեցու տանիքածածկերը, ինչը, մեծ հավանականությամբ, հանրային լայն արձագանքի և հետաքրքրվածության արդյունք է:

Ցավոք, հայ հասարակության ուշադրությունից վրիպեց այն փաստը, որ անկլավային կոչված հատվածում են գտնվում Ոսկեպարի կամուրջը, Բերդ-աշտարակը, սարվորների հուշարձանը, Կոռաբերդը, կամրջակը, հին գերեզմանոցը, իսկ Բերդավանքի եկեղեցին ու Ջուխտակ վանքը մնում են ադրբեջանական համարվող հողերի թիկունքում, ուստի, դեպի այդ հուշարձաններ տանող ճանապարհը՝ ադրբեջանական համարվող տարածքում է մնում: Ինչպես վերը նշվեց, Սբ. Աստվածածին եկեղեցին էլ հողերի զիջումից հետո դառնում է այցելության համար վտանգավոր:

Անդրադառնալով ՄԺ և համայնքի կապին՝ նշենք, որ Ոսկեպար համայնքի բնակչուհի Գայանե Սիրադեղյանը շեշտում է՝ «Խորհրդային տարիներին մեծամասամբ մշակութային ժառանգությունը անտեսվել է, անկախացումից հետո գրեթե մինչև 1996 թվականը այս բնակավայրը պատերազմի մեջ է եղել, բնակիչները երբևէ չեն զգացել նաև պետության հոգածությունը հուշարձանների նկատմամբ, գուցե նաև դա է պատճառը, որ բնակիչներն էլ հոգ չեն տարել ՄԺ պահպանության մասին» [ԴԱՆ, 2024, 14]: Իրավիճակը սակայն որոշակի փոխվել է, երբ գյուղի բարերարներ Յուրի Աղբալյանի և Հենրիկ Գրիգորյանի նախաձեռնությամբ՝ 2017 թվականին Ոսկեպար բնակավայրում տեղի է ունեցել համընդհանուր մկրտություն, որի ընթացքում բնակչության գրեթե 90 %-ը մկրտվել է (Ոսկեպարում տեղի ունեցավ հանընդհանուր մկրտություն): Ապա, նույն թվականին բարերարների հովանավորությամբ բարեկարգվել և վերաօծվել է Սբ. Աստվածածին եկեղեցին, որտեղ տարվա մեջ մի քանի անգամ պատարագներ, հարսանիքի ու կնունքի արարողություններ են կատարվել (Վերաբացվել է Տավուշի Սբ. Աստվածածին եկեղեցին): Թաթուլ Սիրադեղյանի վկայությամբ՝ «Թեև բնակիչները առանձնահատուկ հոգատարություն նախկինում չեն ցուցաբերել, բայց ընդհանուր

առմամբ՝ տեղեկացված են ՄԺ հուշարձանների մասին և անկլավային այս զիջումների արդյունքում, երբ կորցնելու վախը մեծ է, բնակիչները սկսել են ակտիվություն ցուցաբերել, հետաքրքրվել ու փորձել պահպանել ՄԺ-ն, չէ՞ որ հենց մշակույթն է ուղղորդում, քո ինքության մասին տեղեկություն տալիս, թույլ տալիս դատողություններ անել անցյալիդ ու ներկայիդ մասին» [ԴԱՆ, 2024, 12]: Բնակիչների խոսքերով՝ դրսից եկած հյուրերին երբեմն ուղեկցում են բնակավայրի հուշարձանները՝ ծանոթացնելու տեղանքի ժառանգությանը: Այնուամենայնիվ, կարելի է պնդել, որ Ոսկեպարի հուշարձանների հիմնական գործառույթը եղել է տեղանքի հայկականությունը փաստելը, բացառությամբ Սբ. Աստվածածին եկեղեցու, որը սկսած 2017 թվականից՝ կարևոր տեղ է գրավել բնակիչների հոգևոր կյանքում:

Բնակիչները մտահոգ հայտնում են, որ այս պահին Ոսկեպարի անկլավների հետ կապված մի քանի անորոշ հարց կա, որոնք հայկական կողմի օգտին լուծելու դեպքում հնարավոր կլինի ապրել բնակավայրում, այլապես՝ բոլորը կհեռանան, որովհետև ամբողջ բնակավայրը կդառնա չափազանց վտանգավոր. բոլոր կոմունիկացիաները, միջպետական ճանապարհը կանցնի թշնամուն, իսկ բնակավայրը կհայտնվի եռանկյունու մեջ՝ երեք կողմից շրջապատված թշնամական ուժերով:

Եզրակացություններ: Վերը նշվածից ելնելով՝ կարելի է պնդել, որ Տավուշի սահմանամերձ բնակավայրերում ՄԺ պահպանությունը լուրջ մարտահրավեր է, հատկապես այն հատվածներում, որտեղ կան անկլավային վիճելի տարածքներ: Աչքի առաջ ունենալով Արցախի ցայտուն օրինակը, երբ քաղաքակիրթ աշխարհի առաջ ռմբակոծվեց Սբ. Ղազանչեցոցը, ապա աղճատվեց, երբ հիմնահատակ քանդվեցին Կանաչ Ժամը, Մեխակավանի Սբ. Աստվածածին եկեղեցին, վերջերս էլ հիմնահատակ ոչնչացվեց Բերձորի Սբ. Համբարձման եկեղեցին և ոչ մի պատիժ չստացան, արդեն պարզ է դառնում, թե ինչ վտանգի առաջ են կանգնում Տավուշի սահմանային վիճելի հատվածների ՄԺ-ն և բնակչությունը: Ժառանգությունը կրող համայնքը, որքան էլ հետաքրքրված է ժառանգության պահպանությամբ, երբեմն նույնիսկ զրկվում է իր ՄԺ իրացման իրավունքից՝ սահմանային լարված իրավիճակներով պայմանավորված: Եթե Այգեհովիտի ՄԺ-ի դեպքում համայնքը ցանկանում է վերանորոգել վանքը, տուրիզմ զարգացնել, երբեմն թշնամու հետ պատերազմական լարվածության պատճառով ստիպված է դադարեցնել տուրերը, ապա հողային զիջումներից հետո շատ ավելի վտանգավոր ու լարված վիճակում է հայտնվելու: Ոսկեպար բնակավայրի ՄԺ-ն հողային զիջումների ֆոնին է հետաքրքրություն առաջացրել հասարակության մեջ, բայց ցավոք գտնվում է վտանգավոր գոտում, իսկ անկլավային հողերի զիջման արդյունքում դառնալու է այցելության համար անհասանելի կամ խիստ վտանգավոր, ինչպես օրինակ՝ Սբ. Աստվածածին եկեղեցին: Եթե հաշվի առնենք վերոնշյալ տարածքների հետ կապված տարածքային վեճերը, պատերազմի վտանգը, Արցախի ՄԺ-ի հետ կապված խնդիրները, ապա պատկերը շատ մտահոգիչ է դառնում:

Այսպիսով՝ սահմանային այս վեճերը ոչ միայն ազդել են տարածաշրջանի կայունության վրա, այլև խաթարել են տեղի բնակչության կյանքը, ովքեր ապրում են պոտենցիալ էսկալացիայի մշտական վախի մեջ: Սա շատ անհանգստացնող և վտանգավոր է թե՛ ՄԺ պահպանության, և թե՛ բնակչության կյանքի համար:

Ամփոփելով ասվածը՝ նշենք, որ ամբողջ աշխարհում պատերազմող երկրների սահմանային հատվածներում գտնվող ժառանգությունը մեծ վտանգի մեջ է, քանզի ՄԺ բազմիցս դիտավորյալ

թիրախավորվել է՝ հակառակորդի բարոյականությանը, ինքնությանը վնաս հասցնելու և համայնքին վախ ներշնչելու համար (Sørensen, Viejo-Rose, 7)։ Ինչպես տեսանք, միջազգային ընդունված կոնվենցիաները դեռևս ի զորու չեն զսպելու ագրեսոր երկրներին և կանխելու մշակութային ցեղասպանությունը։ Ուստի, ՄԺ միտումնավոր ոչնչացումը թույլ է տալիս միջազգային հանրությանը նոր իրավական փաստաթղթեր մշակել և միջազգային հանրությունը պետք է նոր լծակներ մշակի ագրեսոր երկրներին պատժելու, լարված, կոնֆլիկտային, պատերազմական իրավիճակներում ՄԺ պահպանությունը կայուն դարձնելու համար։

Գրականության ցանկ

UNESCO Declaration Concerning the Intentional Destruction of Cultural Heritage, adopted on 17 October 2003, Paris, https://www.unesco.org/en/legal-affairs/unesco-declaration-concerning-intentional-destruction-cultural-heritage, (վերջին մուտք՝ 28.05.24)։

Մշակութային ժառանգության նշանակությունը հասարակության համար, Եվրոպայի խորհրդի շրջանակային կոնվենցիա, 27.10.2005, https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=80575, (վերջին մուտք՝ 10.05.24)։

ՀՀ կառավարության որոշումը ՀՀ Տավուշի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին, 22.01.2005, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=13320, (մուտք 30.12.22)։

Բարխուտարեանց Մ., 1895, Արցախ, Բագու, «ԱՐՕՐ», (էլեկտրոնային տարբերակ)։

Էլլարյան Ի., 1968 թ., Աղստևի հովտի բնությունը և պատմական հուշարձանները, Երևան, «Հայաստան» հրատ.։

Էլլարյան Ի., 1980 թ., Աղստևի հովտի պատմության և կուլտուրայի հուշարձանները, Երևան, «Հայաստան» հրատ.։

Կարապետյան Ս., Աբրահամյան Է., Հակոբյան Ա., Քորթոշյան Ռ., Մովսիսյան Գ., Հովհաննիսյան Հ., Գևորգյան Ա., 2013 թ., Ոսկեպարի պատմական հուշարձանները, Երևան, ՀՃՈՒ հիմնադրամ։

Կոստանդյան Ա., 2024 թ., Դաշտային նյութեր, Այգեհովիտ և Ոսկեպար բնակավայրեր։

Կոստանդյան Ա., 2023 թ., Համայնքի ներգրավումը մշակութային ժառանգության պահպանությանը. ՀՀ Աղավնավանք բնակավայրի օրինակի ներկայացում, Регион и мир, № 1։

Տիգրանյան Ա., 2023 թ., Արցախահայերի բռնի տեղահանությունը և կորսված ոչ նյութական մշակութային ժառանգությունը, Անալիտիկոն հանդես։

Տիգրանյան Ա., 2022 թ., Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցու թիրախավորման դեպքի քննություն. Պատերազմի ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության միջազգային սկզբունքների դիտանկյունից, ՎԷՄ, 2։

Marie Louise Stig Sørensen and Dacia Viejo-Rose, The Impact of conflict on cultural heritage, Cambridge University Press 978-1-107-05933-7 - War and Cultural Heritage: Biographies of Place.

Mechtild Rössler, 2020, World Heritage and Reconstruction: An Overview and Lessons Learnt for the Bamiyan Valley, https://www.researchgate.net/publication/347419227 World Heritage and Reconstruction An Overview and Lessons Learnt for the Bamiyan Valley, (վերջին մուտք՝ 05.04 2024).

Rasoolimanesh S. M., 2019, Does living in the vicinity of heritage tourism sites influence residents perceptions and attitudes, Journal of Sustainable Tourism, 27(9): 1295-1317.

René Teijgeler, 2006, Preserving cultural heritage in times of conflict, Preservation management for libraries, archives and museums. London: Facet Publishing.

Salvatore R., Chiodo E., Fantini A., 2018, Tourism transition in peripheral rural areas: Theories, issues and strategies, Annals of Tourism Research 68, pp. 41-51, www elsevier.com/locate/annals.

Yasemin Kocak Bilgin, Eda Hazarhun, 2023, The Cultural Heritage Impact of The Russia-Ukrainian War, tourism academic journal.

Այգեհովիտ, Վազաշեն, Պառավաքար գյուղերի շուրջ հայ-ադրբեջանա/ռուսական վեճ. հուլիս, 1920թ., 09. 07. 21, Հայկական ուսումնասիրությունների Անի կենտրոն, https://www.aniarc.am/2021/07/09/aygehovit-paravakar-vazashen-1920-sepuh-bolsheviks/, (վերջին մուտք՝ 10.05.24):

Հակոբյան Թ., 2020, Ոսկեպարի օրինակով. հայ-ադրբեջանական հողային կռիվը 1980-ականներին, Հայկական ուսումնասիրությունների Անի կենտրոն, https://www.aniarc.am/2020/08/06/voskepar-1985-homes/, (վերջին մուտք՝ 15.04.24):

ՀՀ վարչապետի ասուլիս, Եթե կասեցվի սահմանազատման գործընթացը, կսկսվի պատերազմ, 07.05.24, «Ժողովուրդ», https://armlur.am/1365487/, (վերջին մուտք՝ 10.05.24):

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, 21.05.2024 թ., Կնորոգվեն Ոսկեպարի Սբ. Աստվածածին եկեղեցու տանիքածածկերը, https://escs.am/am/news/22396 , (վերջին մուտք՝ 10.05.24):

Հրավեր. Զատկական աղոթք և հավկթախաղ, 29.03.24, Տավուշի Թեմ-Տահույս, https://www.facebook.com/tahuys/posts/pfbid0dkhwucnvnZ5BaNKTBpAz2zVGjFtRbLPbumkDetGuK92WF81mysdiEHhQfFwpsu6Dl, (վերջին մուտք՝ 10.05.24):

Տավուշի Այգեհովիտի զարդը. Սուրբ Սրվեղի վանական համալիր, 06.04.2023, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների
և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն, https://hushardzan.am/archives/27959, (վերջին մուտք՝ 10.05.24):

Որտեղ կհայտնվեն Ոսկեպարի եկեղեցին ու Կիրանցի դպրոցը՝ սահմանազատումից հետո, 24.04.24, https://tavushmedia.am/hy/vortegh-khaytnven-voskepari-ekeghecin/?fbclid=IwZXh0bgNhZW0CMTAAAR1o879mUQPv4NvkXve0CKGswdNV0gn5Rhn_M-VjIyonQ8egbPbLtG960t4_aem_AZaL7_3M1UyZigUyqrbE7VwcINg1CO-e5VvIq6-tXlF3GX0vhG59dtKuC-ONsaOcblaXh5uBwVpR4WIQyGNhy3ok, (վերջին մուտք՝ 10.05.24):

Այգեհովիտի 150 տոննա խաղողը տունկերի վրա նեխում է, Հայկական ժամանակ, 07.10.2015, https://armtimes.com/hy/article/71570, (վերջին մուտք՝ 10.05.24):

Բարխուդարլու անկլավ, https://hy.wikipedia.org/wiki/%D4%B2%D5%A1%D6%80%D5%AD%D5%B8%D6%82%D5%A4%D5%A1%D6%80%D5%AC%D5%B8%D6%82, (վերջին մուտք՝ 10.05.24):

Համշեն տուր, քայլարշավ դեպի Ոսկեպար, https://www.facebook.com/story.php/?story_fbid=810661311096032&id=100064565117053&paipv=0&eav=AfaAhmCIDrkXpWIIwuE3yx1V_yAzYjK4ASwvigOpZCxUxAabJVd3l6x6j0s8c_lnDyo&_rdr, (վերջին մուտք՝ 28.05.24):

Ոսկեպարում տեղի ունեցավ համընդհանուր մկրտություն, https://www.youtube.com/watch?v=WySXDmEkMZE, (վերջին մուտք՝ 10.05.24):

Վերաբացվել է Տավուշի Սբ. Աստվածածին եկեղեցին, https://www.youtube.com/watch?v=ZWR9jHwEL2o, (վերջին մուտք՝ 10.05.24):

Նկ. 1 Սրվեղի վանք («Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կայք)

Նկ. 2 Տավուշի Սոֆուլու, Բարխուդարլու անկլավներն ու Այգեհովիտը («Հրապարակ»)

Նկ. 3 Ոսկեպարի Սբ. Աստվածածին եկեղեցի («Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կայք)

Նկ. 4 Ոսկեպարի հին կամուրջը (CreActive Tour-ի սոցիալական էջից)



Նկ. 5 Ոսկեպարի դիրքը սահմանազատումից հետո (epress.am)